

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ս. ՇԱՐՈՒՐՅԱՆ

Պետրոս Դուրյանի նամակների նկատմամբ հետաքրքրությունն արթնացել է դրանց լույս տեսնելուց առաջ: Դեռևս 1876-ին, երբ Մխչրան Դուրյանը Սկյուտարի ճեմարանի հայերենի ուսուցիչն էր, իր աշակերտ Արմենակ Աստվածատրյանին որպես ընթերցանության նյութ ընդօրինակել է տվել, եղբոր՝ Պետրոս Դուրյանի նամակները: Հիշյալ Ա. Աստվածատրյանը, ճեմարանի սաներ Բարսեղ Էքսերճյանը, Սիմոն Գաբամաճյանը և Հարություն Գազազյանը մտադրվել են զրոգի այլ անտիպ գործերի հետ հրատարակել նաև նամակները, բայց այդ գործը հաջողությամբ չի պսակվել:

Միայն 1884-ին քրանաստեղծին զրվածոց մասին որևէ ճաշակ մը տալու» նպատակով «Ընտանիք» հանդեսը տպագրեց Պ. Դուրյանի նամակներից մեկը:

Ավելի ուշ Հրանդը (Մելքոն Կյուրճյան) տեղեկացրեց, որ ինքը նիկոմեդիայում ծանոթացել է Դուրյանի նամակներին: «Մտերմական նամակներ են, ամենքն ալ զրված վաղամեռիկ քրանաստեղծին նախընթաց տարվո (1871-ի — Ա. Շ.) վերջին քառորդին մեջ»: Նա ցանկություն էր հայտնում, որ քրոյոր անտիպ նամակները մեկ հատորի մեջ ամփոփված մամլո տակ զրվեին»:

Շուտով «Արևելք»-ի 1889 և 1890-ի համարներում երևաց Դուրյանի ութ նամակ: «Գտնված նամակները,— ծանոթացնում էր օրաթերթը,— բուն ձեռագիրները չեն, այլ ճեմարանի (Սկյուտարի — Ա. Շ.) նախկին աշակերտի մը (իմա՝ Բ. Էքսերճյանի — Ա. Շ.) ձեռամբ ընդօրինակված և ջերմեռանդ խնամով պահված ի նիկոմեդիայում» Բ. Էքսերճյանը 1892-ին «Արևելք»-ում հրատարակեց ևս մի քանի նամակ, որոնք նախորդների հետ զետեղվեցին Պ. Դուրյանի 1893-ին լույս ընծայված «Տաղք և թատերգությունք, նամականի, դամբանական, տապանագիրք» ժողովածուի մեջ: Հետագայում տպագրվեց ևս երկու նամակ, որով ցարդ հայտնի և հրապարակված նամակների թիվը կազմում է 15:

Շատ է զրվել Դուրյանի նամակների մասին: Ուսումնասիրողները ոչ միայն կենսագրական տեղեկություններ են քաղել, այլև հաճախ դրանք վերլուծել են որպես գեղարվեստական արժեք ունեցող վավերաթղթեր: Զժխտելով այդպիսի աշխատանքի կարևորությունը, մենք անհրաժեշտ ենք համարում Դուրյանի նամակները քննել քանասիրական առումով: Իսկ այդ տեսակետից առարկելու, ճշտելու և լրացնելու բան կա:

Նախ, հրատարակության հանձնելով Դուրյանի նամակները, Բ. Էքսերճյանը բավարարվել էր նշելով, որ դրանք «ուղղված են հորեն Ս. Արքեպիսկոպոս Նար-Պեյի, Մատթեոս Ս. Արքեպիսկոպոս Իղմիրյանի, Հովհ. էֆ. Ծանֆեսյանի, Տիգրան էֆ. Աղամյանի...»¹: Այսպիսի բացատրությունը պատասխան չի տալիս այն հարցին, թե ո՞ր նամակն ում է ուղղված: Ժխտ է, Բ. Էքսերճյանի «Ընդարձակ կենսագրություն բարեհիշատակ Պետրոս Դուրյանի» (Կ. Պոլիս, 1893) և Ա. Զոպանյանի «Պետրոս Դուրյան» (Բիֆլիս, 1894) աշխատություններում տարբեր առիթներով մեջբերումներ են կատարված Դուրյանի նամակներից և հաճախ նշված են հասցեատերերը: Բայց առանձին նամակների կապակցությամբ խնդիրը լուծված չէ:

Այնուհետև, չփոթ ու հակասական են Դուրյանի որոշ նամակների ինչպես զբոսայգի շառժան ռիսներ, այնպես էլ քվականների կամ ամսաքվերի մասին տեղեկությունները:

¹ «Արևելք» օրաթերթ, Կ. Պոլիս, 1889, թիվ 1595 (առաջական օրագիր):

² Նույն տեղում, թիվ 1607 (ընդգծումն իմն է — Ա. Շ.):

³ Պ. Դուրյան, Տաղք և թատերգությունք, նամականի, դամբանական, էջ 27, ծանոթություն:

⁴ Օգտվելով այդ վկայություններից, Մեսրոպ Ծանաշյանը Դուրյանի «Տաղեր, նամակներ, հատվածներ» ժողովածուների (Վենետիկ, 1945 և 1959) ծանոթագրություններում մեծ մասամբ կարողացել է պարզել, թե ում են ուղղված Դուրյանի նամակները:

Վերջապես, երրորդ և ամենաշակալան թերությունն այն է, որ էքսերճյանի տպագրած տեքստերը հարազատորեն չեն վերարտադրում հեղինակային բնագրերը:

Այսպիսի պնդումը հաստատող ի՞նչ փաստեր կան:

Ինչպես տեսել ենք, Դուրյանի նամակները տպագրվել են էքսերճյանի ընդօրինակություններից: «Արևելք»-ում հրատարակված և 1893-ի ժողովածուի մեջ գնտեղված տեքստերի համեմատությունները ցույց են տալիս, որ զբեթն միշտ էլ տուկա են տարբերություններ: Ավելին, «Ընդարձակ կենսագրություն...»-ում կատարված մեջբերումները ես լեզվա-ոճական տեսակետից չեն համապատասխանում իր իսկ՝ էքսերճյանի հրատարակած տեքստերին:

Բազմաթիվ օրինակներից բերենք մեկը:

«...Այլ դուրս ելնելու կարողություն չը մնալ վրաս, սանդուղեն վար իջնելու համար հսուկ է ու հեղձանքին կրքնիմ... Եթե քու գալուստդ գարնան մնա — շատ կը սոսկամ, որ ոչ մտերմական ժախտդ և հետևաբար ոչ ալ գառնան փթթումը պիտի տեսնեմ»⁵:

«...Այլ դուրս ելնելու կարողություն չի մնաց վրաս, սանդուղեն վար իջնելու համար պետք է ու հեղձանքին կրքնիմ...»

Եթե քու գալուստդ գարնան մնաց, շատ կը սոսկամ որ ոչ մտերմական ժախտդ, ոչ ալ հետևաբար գարնան փթթումը պիտի տեսնեմ»⁶:

«...Այլ դուրս ելնելու կարողություն չմնաց վրաս, սանդուղեն վար իջնելու համար հեղձանքին կը կրքնիմ... Եթե քու գալուստդ գարնան մնա, շատ կը սոսկամ որ ոչ քեզ և ոչ ալ հետևաբար գառնան փթթումը պիտի տեսնեմ»⁷:

Ի լրումն սրա «Արևելք»-ում այս նամակի գրության թիվ է նշված՝ 1871-ի նոյեմբերի 30-ը, իսկ 1893-ի ժողովածուի մեջ՝ նոյեմբերի 23-ը:

Հնարավոր է, որ այս տարբերությունները անուշադրության արդյունք լինեն (ի դեպ «Ընդարձակ կենսագրություն...»-ում տաղերից կատարված քաղվածքների մեջ ևս այդպիսի անհամապատասխանություններ նկատելի են): Բայց կան նաև միտումնավոր աղավաղումներ, որոնց պատճառը զրաքննական խստություններն էին, իսկ ավելի հաճախ՝ հրատարակչի սահմանափակ աշխարհայացքը և կղերամիտ ըմբռնումները (1893-ի կեսերին էքսերճյանը ձեռնադրվեց քահանա և ընդունեց Հմայակ անունը):

Երկու աղբյուր օգնում են պատկերացում կազմելու այդ աղավաղումների մասին: Առաջինը ժամանակի պարբերական մամուլում տպագրված նամակների տեքստն է, իսկ երկրորդը և առավել կարևորը ընդօրինակությունների մի տետր է, որ պահվում է ՀՍՀԿ Կուլտուրայի միջնադարյան Գրականության և արվեստի թանգարանի Արշակ Չոպանյանի ֆոնդում⁸:

Այս ընդհանուր դիտողություններից հետո քննենք առանձին նամակներ:

Մատթեոս Իզմիրլյանին ուղղված նամակը

Պ. Դուրյանից մեզ հասած առաջին նամակն է և գրված է 1869-ի սեպտեմբերի 17-ին: Բ. էքսերճյանը խոստովանել է. «Սույն նամակն տպագրել կարենալու համար ի՛նչ ի՛նչ փոփոխություններ րրած եմ առհարկ»⁹: Կարելի է ենթադրել, որ Դուրյանը հիշատակել է հայ պատմական անձնավորություններին կամ խոսել հայրենիքի ճակատագրի մասին (ինչպես Մ. Խրիմյանին նր-

5 «Արևելք», 1892, թիվ 1607:

6 Պ ե տ ր ո ս Դ ու Ր յ ա ն, Տաղք և թատերգությունք, նամականի..., էջ 247:

7 Բ. է ք ս ե Ր Ճ յ ա ն, Ընդարձակ կենսագրություն..., էջ 102—103:

8 Ա. Չոպանյանը ձեռնարկելով Պ. Դուրյանի կենսագրական ու քննադատական ուսումնասիրությանը, նույնպես հետաքրքրվել է դրողի նամակներով: Բ պատասխան նրա հարցման, Սղիշե Դուրյանը, որ արդեն հոգևորական էր և պաշտոնավարում էր Արմաշի դպրեվանդում, 1891-ի սեպտեմբերի 30-ի նամակում հայտնել է. «Դուրյանի անտիպ դործերեն իմ քով կգտնվին նամակներն, որոնց մի քանին հրատարակեց «Արևելքի»-ի մեջ իմ տաղանդավոր բարեկամս և դասընկերս Մելքոն Էֆ. Կյուրճյան (կիսատանամ ի պատեհ առթի այնոնց մեկ օրինակությունն ղրկիլ Ձեզ)»: Հիշյալ նամակը տես «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 1, էջ 167): Նա կատարել է իր խոստումը և Մալաթյա Օրմանյանի միջոցով Չոպանյանին ուղարկել մի տետր, որտեղ հավանաբար աշակերտներից մեկի ձեռքով ընդօրինակված է ուրի նամակ (ղրանցից 4-ր տպագրել էր Հրանդը, իսկ մյուսները հրատարակեց էքսերճյանը):

9 Պ. Դ ու Ր յ ա ն, Տաղք և թատերգությունք, նամականի..., էջ 224:

վիրված բանաստեղծություններում), մի բան, որ անթույլատրելի էր 90-ական թվականների թուրքիայում:

Նամակի գրության մասին կա երկու կարծիք: Ե. Դուրյանը Ա. Չոպանյանին ուղղված 1891-ի օգոստոսի 30-ի նամակում ի միջի այլոց նկատել է. «Գիտեմ, որ (Պ. Դուրյանը — Ա. Շ.) գրաբար նամակ մը գրած է դեր. <ապատիվ> Մատթեոս Իզմիրլյան Սրբազան՝ նորա սարկավագության ժամանակ»¹⁰, իսկ էքսերճյանը հայտնում է. «...Մատթեոս եպիսկոպոս Իզմիրլյան 1867 հունիս 29-ին վաղուպես կը ձեռնադրվի Օրթադուղի Ս. Աստվածածնի եկեղեցվո մեջ վիճել. չով. եպիսկոպոս Կապուտիկյան Սրբազանն, և Պետրոս շնորհավորական գրաբար նամակ կգրե հեիհե Օրթագեղ վազել, և ձեռնադրության շահանելն հետո, որ հրատարակված է Տաղերուն Բ տպագրության մեջ»¹¹:

Ե. Դուրյանի տեղեկությունը բացահայտորեն ճիշտ չէ, քանի որ Իզմիրլյանը սարկավագ է ձեռնադրվել 1864-ին, իսկ էքսերճյանի վկայությունը հակասական է ու սխալ: Եթե 1867-ին Իզմիրլյանն արդեն եպիսկոպոս էր, ապա ի՞նչ հարկ կար ձեռնադրել... վարդապետ: Իրականում Սիմոն սարկավագ Իզմիրլյանը վարդապետ է ձեռնադրվել և ընդունել Մատթեոս անունը 1869-ի հունիսի 29-ին, իսկ եպիսկոպոսական վկայագիրն ստացել է 1876-ին¹²: Բայց ինչու է Պ. Դուրյանը Իզմիրլյանին շնորհավորել նրա վարդապետ դառնալուց ավելի քան երկու ամիս հետո: Մեր կարծիքով այդ շնորհավորական նամակը գրված է Իզմիրլյանի «ղավազանի իշխանություն» առնելու առիթով, որն ըստ կենսագրի կատարվել է 1869-ի «Վարդապետ խաչի բարեկենդանի կյուրակներ», Օրթագյուղի Ս. Աստվածածնի եկեղեցում: Իսկ այդ տոները նշվել է սեպտեմբերի 21-ին¹³, որը ավելի մոտ է Դուրյանի նամակի ամսաթվին, քան էքսերճյանի նշածը:

Խոբեն և ար-Պեյին ուղղված նամակը

Մինչև 1893-ի ժողովածուի մեջ ղեկավարվել տպագրվել է «Ընտանիք» հանդեսում (1884, թիվ 12, էջ 189—190) և «Արևելք» օրաթերթում (1889, թիվ 1507): Հիշյալ պարբերականներում երկու անգամ հանդիպում ենք «Հեղափոխական հրարուխ» արձագանքությանը, որից ժողովածուներում մնացել է միայն «հրարուխը», «Զուլումի» տարիներին այդ բառը «հանրապետություն», «ազատություն» և այլ բառերի նման դիտվում էր վտանգավոր: Իսկ մամուլում տպագրված տեքստերում պահպանվելը բացատրվում է նրանով, որ ինչպես հաստատում է Ա. Արփիարյանը, մինչև 1888 թվականը գրաքննական արգելքը տալուց մինչև է միայն գրքերի վրա¹⁴:

Տիգրան Աղամյանին ուղղված նամակները

1893-ին «Մասիս» շաբաթաթերթում տպագրվեց Պ. Դուրյանի մի նամակը, որը չի ղեկավարվել գրողի ժողովածուներում:

Բ. էքսերճյանն ու Ա. Չոպանյանը ծանոթ են եղել նամակին և քաղվածքներ են կատարել: էքսերճյանը, բերելով մի ընդարձակ հատված, գրության թվականն է համարել 1871-ը և ավելացրել. «Հնգյուլ. Որդիկ պեյի տունը թողած միջոցին կգրե այս նամակը»¹⁵: Չոպանյանը նույնպես հավաստում է, որ նամակը գրված է 1871-ի ղեկամբերին: Իսկ «Մասիս»-ում տպված տեքստում ամսաթիվն է՝ «1870 զեկտմ. 21»:

Պարզելու համար, թե երկու թվականներից որն է ընդունելին, դիմենք նամակի տեքստին: Դուրյանը գրում է. «Վարդան-Մարտիկ-Պետրոս—նույնություն, մեր հակատագիրները դպրոցի մեջ միացան և տեսնենք ի՞նչ համախմբություն մը գայն պիտի լուծեն»¹⁶: Խոսքն այստեղ վերա-

¹⁰ «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 1, էջ 170:

¹¹ Բ. էքսերճյան, Ընդարձակ կենսագրություն... էջ 87 (ընդշմումներն իմն են — Ա. Շ.):

¹² Տե՛ս Սիմոն Գարամաճյան, Ամենապատիվ Տ. Տ. Մատթեոս Ա. Արքեպիսկոպոս Իզմիրլյան, բարձրաշնորհ Տ. Եղիշե Ս. եպիսկոպոս Դուրյան, Կ. Պոլիս, 1908, էջ 6, 8 և 10:

¹³ «Օրացույց և գուշակությունք օրոց 1869 թվին Քրիստոսի և Հայոց ՌՅԺԸ=1318», հորինյալ ի տեր Երեմիա քահանայի, Կ. Պոլիս:

¹⁴ Ա. Արփիարյան, Պատմություն ԺԲ գարու թուրքիո հայոց գրականության, Գահիրե, 1943/44, էջ 76:

¹⁵ Բ. էքսերճյան, Ընդարձակ կենսագրություն... էջ 70:

¹⁶ «Մասիս» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1893, ապրիլի 17, թիվ 3987, էջ 228:

բերում է երեք ընկերների՝ Վարդան Լուսինյանին, Մարտիկ (Մարտին) Պողիկյանին և իրեն՝ Պետրոս Դուրյանին, ինչպես տեսնում ենք Վ. Լուսինյանի մասին խոսվում է որպես կենդանի մարդու, իսկ Վարդանը մահացել է 1871-ի մայիսի 21-ին¹⁷։ Եթե նամակը գրված լիներ 1871-ի դեկտեմբերին, ապա նույնությունը արդեն լուծված կլիներ։ Ուրեմն ճիշտը 1870-ն է։

«Մասիս»-ը նամակի առթիվ չի նշել, թե ում է ուղղված։ Գրականագետ Վահրամ Բերգիրաջյանը իր ուսումնասիրության մեջ արտատպելով Դուրյանի այս նամակը, «Վարդան-Մարտիկ-Պետրոս» արտահայտությունից հետեցրել է. «նամակի հասցեատերը պետք է լինի Վարդան Լուսինյանը կամ Մարտին Պողիկյանը... սակայն հավանաբար նամակը գրված է Մարտինին, որովհետև այդ ժամանակ Վարդանը Եգիպտոսից արդեն վերադարձել էր, իսկ Մարտինը նոր էր մեկնել Պոլսի մոտակա վայրերից մեկը։ Իհարկն շոգենավով, դրա համար էլ Դուրյանը գրում է, որ այնքան է տխրել, որ նույնիսկ մոռացել է իր սիրելի ընկերոջը բարով նստիս» մաղթելու¹⁸։ Իրականում նամակը գրված է Տիգրան Աղամյանին, որ պաշտոնավարում էր գավառում։ Այդ մասին ակնարկում է Բ. Էքսերճյանը, իսկ ավելի որոշակի ասում է Ա. Չոպանյանը։

Մ. Ժանաշյանը շիմանալով նամակի «Մասիս»-ում տպագրված լինելու փաստը, համադրել է Էքսերճյանի և Չոպանյանի վկայակոչած հատվածները և նկատել մի շարք տարրերություններ, որոնք «խորհիլ կու տան թե Էքսերճյան հապաված կամ փոխած ըլլա այն մասերը, որ նպաստավոր չեն Վարդանյանի համար. ան համակրությունը կշարժի արդեն Վարդանյանի հանդեպ իր գործին ուրիշ ինչ ինչ կետերու մեջ»¹⁹։ Սա իրավացի դիտողություն է։ Էքսերճյանն իր աշխատության մեջ ամեն կերպ սքողում է Վարդանյանի անբարյաքակամ վերաբերմունքը Դուրյանի հանդեպ և զարամանալի չէ, որ նամակը ևս խմբագրել է այդ ոգով։ Ուշտի նամակի «...Քեզ ծանոթ անձի մը հին արկածներն ատելության կրակովը բորբոքած՝ նախատինքներուն չկրնալով հանդուրժել, աղտոտ անկողինս թափոնեն տուն փոխադրեցի, այս ալ բրի ապրելու համար, անգործությունը թողափելու համար, այդ անձին ինձի բրած նախատանաց պատմությունը սոսկալի է...»²⁰ պետք է դիտել աղավաղում և ուղղել Չոպանյանի մեջբերմամբ. «...Վարդանյանի (հին արկածներն մնացած ատելության կրակովը բորբոքած) նախատինքներուն չկրնալով հանդուրժել, աղտոտ անկողինս թափոնեն տուն փոխադրեցի, ինձի բրած նախատանաց պատմությունը սոսկալի է...»²¹։

Ինչպես տպագիր տեքստերում, այնպես էլ Ա. Չոպանյանին տրամադրված ընդօրինակությունում գտնում ենք մի նամակ, որի գրության թվական է նշված 1871-ի հուլիսի 6-ը։ Այն սկսվում է «Ժամանակն մը ի վեր է, — որ քեզ նամակ մը գրեցի» բառերով, որ ենթադրել է տալիս, թե սրան նախորդած պետք է լինի մեկ այլ նամակ։ Իսկապես, ժողովածուներում կա հուլիսի 6 թվակիր մի նամակ, որի հասցեատերը նույնպես Տ. Աղամյանն է։ «Ժամանակն մը ի վեր» արտահայտությունը ցույց է տալիս, որ նախորդ նամակը գրված է գոնե մի քանի օր առաջ, բայց ոչ մեկ օր առաջ, այլապես որևէ կերպ կակնարկեր այդ հանգամանքը։ Երկուսից մեկը՝ կամ սխալ է օրինակված ամսաթիվը, կամ նամակները հասցեագրված են ուրիշին։ Ըստ երևույթին վերջին ենթադրությունը ընդունելի է թվացել Մ. Ժանաշյանին, որը գրել է, թե հուլիսի 5 թվակիր նամակը ուղղված է թերևս Հովհ. Ժանֆեսճյանի²²։ Իրականում երկու նամակներն էլ գրված են Տ. Աղամյանին և այդ երևում է հետևյալ փաստերից.

Նախ հուլիսի 6-ին վերագրվող նամակի մասին.

Դուրյանը այստեղ գրում է. «Ինչպես որ տեղ մը բսած եմ, մարդկության վառարաններն մեկուն՝ վարժարանի մը մեջ սև ճակատագիրը երկաթյա պսակով մը մեր գլուխները իրարու մոտեցուց...»։ Այս միտքը նա արտահայտել է 1869-ի դեկտեմբերի 20-ի նամակում («Ուր կմնա մեր ճակատագիրը, այն ճակատագիրը, որ դմեզ միացուց մանկության մեջ այն ընկերական վառարանին շուրջը, որ դպրոց կրովի»), որը, ինչպես վկայում է Էքսերճյանը, ուղղված է Տ. Աղամ-

¹⁷ Տե՛ս «Մասիս» օրաթերթ, Կ. Պոլիս, 1871, մայիսի 22։

¹⁸ Վ. Բերգիրաջյան, Պետրոս Դուրյան, Երևան, 1959, էջ 58։

¹⁹ Պետրոս Դուրյան, Տաղեր, նամակներ, հատվածներ, Վենետիկ, 1959, էջ 65, ծանոթագրություն։

²⁰ «Մասիս», 1893, թիվ 3987, էջ 228։

²¹ Ա. Չոպանյան, Պետրոս Դուրյան, կենսագրական և քննադատական ուսումնասիրություն, Թիֆլիս, 1894, էջ 45։ Վարդանյանի և Դուրյանի փոխհարաբերությունների մասին տե՛ս նույն աշխատության 44—47 էջերը։

²² Պետրոս Դուրյան, Տաղեր, նամակներ, հատվածներ, էջ 70։

յանին²³։ Կալով հուլիսի 5-ի նամակին, ապա հարցը լուծելու համար դիմենք մի կողմնակի ապացույցի, 1871-ի հոկտեմբերի 11-ի նամակում, որի հասցեատերը նույնպես որոշակիորեն Տ. Աղամյանն է²⁴, կարգում ենք. «և՛ ըսած եմ լսեցամ մը, թե աշխարհ Աստծո՝ այն գերմարդկային տիտանին ձանձրություն մեկ հառաչն է, հառաչ մը, որ աշխարհստեղծությունն հառաչ քառասյին խառնակության մը վրա հառաչ եկավ»։ Բսկ Դուրյանն այդ ասել է հենց այս նամակում։

Մեր կարծիքով հուլիսի 6-ի թվականով հրատարակվող նամակը գրված է ավելի վաղ, հուլիսի 5-ի նամակից առաջ։ Այս վերջինում Դուրյանը ասում է. «Իմ վիճակս կհարցնես, բավական բարձրած եմ, նամակը գրած օրերուս զեշ վիճակի մեջ էի»։ Շատ ցավեցա, որ զՁեզ խոռվեցի. առայժմ Տոթ. Բյաթիպյան ղեռ կխնամի, սակայն ղեռ...»։ Ի՞նչ նամակի մասին է խոսքը։ Ժամանակագրական կարգով դրան նախորդում է 1870-ի դեկտեմբերի 21-ի նամակը, որի մասին արդեն խոսք եղել է։ Բայց այդտեղ Դուրյանն ընկերոջը դանդաղում է իր անգործությունից և ընտանիքի տնտեսական ծանր դրությունից միայն, իսկ առողջության մասին ոչինչ չի ասում, մինչդեռ հուլիսի 6-ի թվականը կրող նամակում է, որ նա մոայլ զույններով ներկայացնում է իր վիճակը. «...Արդ կողողոչեմ, բերեսա արյուն կհոսի, կհոսի»։

Այս ամենը ցույց է տալիս, որ «հուլիսի 6» թվականը ճիշտ չէ, ուստի հրատարակելիս այն պետք է զետեղել հուլիսի 5-ին գրած նամակից առաջ։

Նորից դառնանք հուլիսի 5-ի նամակին։

Ընդօրինակության մեջ կա հետևյալ չափազանց կարևոր հատվածը, որ չի տպագրվել ո՛չ «Արևելք»-ում և ո՛չ էլ 1893-ի ժողովածուի մեջ. «Ինչ ինչ հետևողներ էիք. որ իր հողակույտին վրա փունջ մը ծաղիկ սփռեմ, էս դժոխք մը անեծքներ [կատուծ] անվանը վրա քափեցի, ավելի աղել չրի»²⁵։ Ծաղիկ կյրոմի, սակայն անեծքս կատուծ կողը խրեցավ²⁶։ Որ իսկապես այս տողերը բնագրային են, երևում է նաև Հրանդի «Ջասակական օրագրից», որ կարգում ենք. «Իր մտերմաց մին (իմա՝ Տ. Աղամյանը — Ա. Ը.) հիշեցուցած է, որ գերեզմանին վրա մեզի անծանոթ — ծաղկեփունջ մը ձգե, և Դուրյանը կպատասխանե»։

«Էս դժոխք մը Անեծք կատուծ անվանը վրա քափեցի, — ավելի աղել չրի» մի. ծաղիկը կյրոմի. սակայն անեծքս կատուծ կողը խրեցավ²⁶։

Նկատենք, որ այս հատվածում խոսքը վարդան Լուսինյանի մասին է։ Իսկ ինչու է էքսերճյանը հապավել այդ հատվածը, որը «Տրտունջք»-ի հայտնի տողերի արձակ շարադրանքն է։ Այն պատճառով, որպեսզի ապացուցի, թե Դուրյանը «չերմեռանդ» հավատացյալ էր և «Տրտունջք»-ը դրել է «հիվանդագին ու վերջին օրերուն մեջ», «զգայականությունը» խանգարված ժամանակ»։

Հովհաննես Ճանֆեսեյանին ուղղված նամակը

1893-ի ժողովածուի՝ «Էս կոպտությամբ շատ անգամ բեզ կհանդիմանեմ՝ մահվան սև մտածումը սնուցանող ախտավորի մը նման. հուսամ որ այդ կծու խոսքերը շրթունքներ ինկած ատեն՝ նույնժամայն ներողության արժանացած են բոլոր՝ այլ տողերի փոխարեն «Արևելք»-ի տխրություն տպագրված է։

«Կուղես կմախփով լի հոգի մը խոռվել... սոսկալի երազոց անդունդ մը պղտուել. որ սիրտս է, որ մահվան լուսնուներ կտիւրե, և այն լուսնուներ լուծանող երկնից արձագանքները կան միայն, դուն ալ հեշեցուր եոն Բու Բաղդր Բաբբաղ, Բաբբաղ, ղերեզմանի մը համար նոճի մը ձայնը բավ է. և երբ այսուհետև տեսնվիմք, շատ չը պիտի խոսիմ, այլ լոկ ակնաբեկներով պիտի գոհանամ»²⁸։

Ինչո՞վ բացատրել այս տարբերությունը։ Դրա անուղղակի պատասխանը գտնում ենք Ե. Դուրյանի Ա. Չոպանյանին գրած 1892-ի դեկտեմբերի 25-ի նամակում. «Ճանֆեսեյանի ուղղյալ նամակին վերջին տողերուն մեջ,—գրում է նա,— պարտ կհամարիմ հիշեցնել Ձեզ, թե իմ գրչովս բաներ խառնած եմ, երբ տղա էի և առաջին անգամ այդ նամակը կարդացի, և հետո այնպես օրինակված է։ Բայց Դուք բնագիրն վերստին առեք և նայեցեք»²⁹։

23 Տե՛ս Ընդարձակ կենսագրություն... էջ 105։

24 Տե՛ս Ա. Չոպանյան, Պետրոս Դուրյան, էջ 89։

25 ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆոնդ, շահմարակալված նյութեր։

26 «Արևելք», 1889, թիվ 1585։

27 Ընդարձակ կենսագրություն... էջ 108—109։

28 «Արևելք», 1889, թիվ 1607։

29 «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 1, էջ 171։

Ա. Զոպանյանի արխիվում նամակի ընդօրինակությունը չկա: Սակայն պարզ է, որ հիշյալ հատվածներից մեկը Պետրոս Դուրյանինն է, իսկ մյուսը՝ Նդիշե Դուրյանինը: «Արևելք»-ի հատվածը ոճով և իմաստով մերվում է ամբողջ տեքստին, իսկ ժողովածուներին անհամեմատ շոր է, անհասակաձևի է մնում, թե ի՞նչ կոպտության մասին է խոսքը, կամ ինչու է նա ներողություն խնդրում:

Արմեն Լուսինյանին ուղղված նամակը

Ք. էքսերճյանը «Արևելք»-ում (1892, թիվ 2439) որպես «Տրտունջք»-ի հետ «զաղափարական մերձեցում» ունեցող վավերաթուղթ տպագրել է անթվակիր մի նամակ: Համեմատությունը ցույց է տալիս, որ դա Դուրյանի 1871-ի ղեկտեմբերի 10-ի նամակն է առանց «կարապետ յուր շունչն է՝ն ներդաշնակավոր ճիշդ կարտասանեա րառերով սկսվող և օԱյս է կյանքը» նախադասությամբ ավարտվող հատվածի: Այդ հապավված մասը որպես «անտիպ նամակ», դարձյալ առանց գրության թվականը նշելու, էքսերճյանը հրատարակեց 1911-ի ուշ («Արևելք», 1892, թիվ 2459):

Դժվար է ասել, թե էքսերճյանը ինչու էր միևնույն նամակը բաժանել երկու մասի, բայց որ իրոք դա մի ամբողջական վավերաթուղթ է, հաստատում են 1893-ի ժողովածուի և Զոպանյանի արխիվում պահվող ընդօրինակության տեքստերը: Ընդօրինակության վերջում Ե. Դուրյանը նկատել է. «Այս նամակի օրինակության մեջ թվականն յոռացված է»³⁰: Հայտնի չէ, թե ինչ հիման վրա է հրատարակվել 1893-ի ժողովածուի մեջ վերականգնել թվականը և որքանով է այն ստույգ:

Նամակի «Ով որ Զեզ սև ու պղտոր կտեսնե, ինքն է սևն ու պղտորն» նախադասության կապակցությամբ էքսերճյանը տվել է հետևյալ ծանոթությունը. «Քանի մը տողով ակնարկելն հետո այն ատենվան լրագրական վեճերուն, որ ինքն ալ դեռ մը ունեցած էր, և որք անձնականություններ վիրավորելու շափ հոռաջ գացած են, կհարեմ»³¹:

Հրատարակչի բաց թողած տողերը գտնում ենք Զոպանյանին սրամաղրված ընդօրինակությունների տետրում: Ահա դրանք.

«Նուպարա և Փանոսյանի սանույց ապագա ուխտն իր առաջին շունչն ու նախնիք ի Զեզ պիտի ընդունի: Շանազարա շափ պարտին սիրել զՓանոսյան, օր մ' իսկ բաժն էր քեկ թե Քանոսյան մեկ կողմով ինձ սկզբունք մ' է, ճշմարտություն մ' է, նա մեծ գործող մ' է: Հոգ չէ, նա զիս ալ նախատեց, հոգ չէ, Դուք էիք ինձ խրատողը, քե Փանոսյան, երբ կրե՛ն ելնե, աչքին բիծն ալ լինի՝ Աստվածն անգամ իր առջև զա՝ կկոխե, կանցնի կամ անցին գնա կրսե և այս ալ ամեն մարդու բնական է»:

ՊԱՌԱՎԱՏՈՒՄԻ, ՆՈՐԱՅԻՐԻ և ԱՐԽԻՎՆԻԿԻ վրեժն անշուշտ պիտի մոռնա...»:

Այս հատվածի վերծանումը շափազանց կարևոր է և վերաբերում է Դուրյանի գործունեության ցարդ շրջանարանված մի բնագավառին՝ հրապարակախոսությանը: Ներկա հոդվածի նպատակներից դուրս է դրան անդրադառնալը, նկատենք միայն, որ խոսքը 1856-ին բացված Նուպար-Շանազարյան և 1869-ին Կարապետ Փանոսյանի հիմնած Ազապյան աղջկանց վարժարանի մասին է, իսկ «Պառակտում»-ը, «Նուրայր»-ը և «Արմենակ»-ը որոշ կոահումների համաձայն Պ. Դուրյանի կեղծանուններն են, որոնցով նա հանդես է եկել «Օրագիր ծիլն Ավարայրվո» թերթում³²:

* * *

Ինչպես տեսնում ենք, Դուրյանի նամակներում ազավաղումները (մենք նշել ենք առավել կարևորները միայն) քիչ չեն: Թվում է, թե ճիշտ կլինե՞ր հենվել միայն Ե. Դուրյանի՝ Ա. Զոպանյանին տրամադրած նամակների ընդօրինակությունների վրա, մանավանդ որ դրանք պարունակում են մի շարք կարևոր լրացումներ ու ճշտումներ: Բայց շտապում ենք ասել, որ բոլոր զեպքերում այդպես վարվել չի կարելի: Նախ՝ Ա. Զոպանյանի արխիվում բոլոր նամակների ընդօրինակությունը չկա: Նվազա՝ Ե. Դուրյանը, իր իսկ խոստովանությամբ, չ' հասցրել այդ ընդօրինակությունները «ամբողջ սրբագրել» այնպես որ դրանքում ևս առկա են սխալներ ու վրիպումներ:

Ինքնագրերի բացակայությունը, ինչ խոսք, շատ է դժվարացնում Պետրոս Դուրյանի նամակների բանասիրական ուսումնասիրության գործը, բայց այդպիսի աշխատանքը հնարավոր է ու անհրաժեշտ, քանի որ պարզում է մի շարք չլուծված խնդիրներ:

³⁰ ԳԱԲ, Ա. Զոպանյանի ֆոնդ, չհամարակալված նյութեր:

³¹ Պ. Դուրյան, Տաղք և թատերգություններ, նամականի..., էջ 252: «Արևելք»-ում ծանոթության ընդգծված բառերը բացակայում են:

³² Պ. Դուրյանը «Օրագիր» թերթում գրել է նաև «Պ.» ստորագրությամբ: Այս մասին տե՛ս մեր հաղորդումը («Սովետական արվեստ», 1966, № 12),